

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ
ԺԱՍՆ 15:15-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Սասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Տ. Սարգսյան	ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)
Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Ջախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Մ. Թումասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի քարտուղար)

Հրավիրվածներ

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Հ. Նաղդալյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Վ. Խուրշուդյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Նռանյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Աղաջանյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Մարտիրոսյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ս. Ղոնադչյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Ֆ. Փիրումյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ա. Սայուրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի միջազգային տնտեսական համագործակցության բաժնի պետ
Ա. Գաբրիելյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի միջազգային տնտեսական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ծառայությունների ընտրության մրցույթի արդյունքների գնահատում

(Զեկուցող՝ Ս. Վարդանյան)

1. Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Ս. Վարդանյանը և առաջարկեց հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ծառայությունների ընտրության մրցույթի արդյունքների գնահատման հանձնաժողովի կազմը և հանձնաժողովի նախագահ նշանակել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ Գ. Բեգլարյանին:

Ս. Վարդանյանը հայտնեց նաև, որ Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ), ելնելով Ծրագրի իրականացման նախատեսված ժամկետների և ժամանակացույցի պահպանման խնդիրներից, առաջարկել է աջակցել խորհրդատվական ծառայությունների ընտրության մրցույթային գործընթացում: Մասնավորապես, առաջարկվում է՝ «Առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքների իրականացման խորհրդատվական ծառայությունների ընտրության» մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած ընկերությունների կարճ ցուցակի ձևավորման (ամենաբարձր միավորներ հավաքած 6 ընկերություններ), դրանցից ստացվելիք տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման, մրցույթի հաղթողի թեկնածու առաջարկելու աշխատանքները իրականացվեն ԱԶԲ կողմից (գլխամասային գրասենյակում): Ըստ ԱԶԲ առաջարկի, այս գործընթացում Հայկական կողմը պատասխանատու կլինի կարճ ցուցակում ընդգրկված

ընկերությունների ցանկի հաստատման, ֆինանսական առաջարկների բացման գործընթացին մասնակացության, ինչպես նաև ընտրության արդյունքների (հաղթողի թեկնածու առաջարկի) հաստատման համար:

2. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) համաձայնություն տալ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ծառայությունների ընտրության մրցույթի իրականացման ԱԶԲ-ի առաջարկին,

2) ձևավորել խորհրդատվական ծառայությունների ընտրության մրցույթի արդյունքների գնահատման հանձնաժողով, հետևյալ կազմով.

- | | |
|-------------------------|--|
| 1. Հրանտ Բեգլարյան, | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահ), |
| 2. Մուշեղ Թումասյան, | ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, |
| 3. Ռուզաննա Ալավերդյան, | ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ, |
| 4. Սերոբ Տեր-Պողոսյան, | ՀՀ Վարչապետի խորհրդական, |
| 5. Էդգար Ավետյան, | ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի գործադիր տնօրեն, |
| 6. Արամ Հաջյան, | Հայաստանի Ամերիկյան Համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի դեկան, |
| 7. Ֆելիքս Փիրումյան, | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն: |

2. *Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության բաժնի պետերի ընտրության արդյունքների հաստատում*

(Ձեկուցող՝ Ս. Վարդանյան)

1. Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Ս. Վարդանյանը և նշեց, որ ԾԻԿ-ի չորս բաժինների պետերի թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթները իրականացվել են նույն ընթացակարգով, ինչ ԾԻԿ-ի տնօրենի ընտրությունը: Նա տեղեկացրեց, որ կայացած մրցույթներում փորձառության ու իմացության որակավորումների գնահատման արդյունքում ամենաբարձր միավորները հավաքել են՝

- 1) ֆինանսաիրավաբանական բաժնի պետի պաշտոնում՝ Սերգեյ Մելիք-Յուլյանը,
- 2) պայմանագրային կառավարման բաժնի պետի պաշտոնում՝ Աշոտ Վարդանյանը,
- 3) ծրագրերի նախապատրաստման բաժնի պետի պաշտոնում՝ Աշոտ Կարախանյանը,
- 4) սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանության բաժնի պետի պաշտոնում՝ Արմինե Սիմոնյանը:

Մ. Վարդանյանը առաջարկեց հաստատել մրցույթի արդյունքները և թույլատրել վերոնշյալ թեկնածուներին նշանակել ԾԻԿ-ի համապատասխան բաժինների պետերի պաշտոններում աշխատանքի:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանը ներկայացրեց մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուների համառոտ կենսագրությունները:

2. Քննարկումներից հետո խորհուրդը որոշեց՝ հաստատել մրցույթի արդյունքները և առաջարկեց հետևյալ անձանց հետ կնքել աշխատանքային պայմանագրեր.

- 1) Ֆինանսաիրավաբանական բաժնի պետի պաշտոնում՝ Սերգեյ Մելիք- Յուլյանին,
- 2) Պայմանագրային կառավարման բաժնի պետի պաշտոնում՝ Աշոտ Վարդանյանին,
- 3) Ծրագրերի նախապատրաստման բաժնի պետի պաշտոնում՝ Աշոտ Կարախանյանին,
- 4) Սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանության բաժնի պետի պաշտոնում՝ Արմինե Սիմոնյանին:

3. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի երկրորդ տրանջի՝ Աշտարակ-Թալին ճանապարհի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) վերանայման նպատակով տարաբնակեցման տեղական խորհրդատուների ընտրության մրցույթի տեխնիկական առաջադեղանքի հաստատելու մասին

(Ձեկուցող՝ Մ. Վարդանյան)

1. Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանը և առաջարկեց հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի երկրորդ տրանջի՝ Աշտարակ-Թալին ճանապարհի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերանայման տարաբնակեցման տեղական խորհրդատուների ընտրության մրցույթի տեխնիկական առաջադեղանքը և մեկ ամիս ժամկետով պայմանագիր կնքել տեղական խորհրդատու Գոհար Թադևոսյանի հետ:

Քննարկումներից հետո որոշվեց՝

- 1) հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի երկրորդ տրանջի՝ Աշտարակ-Թալին ճանապարհի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի

վերանայման նպատակով տարաբնակեցման տեղական խորհրդատուների ընտրության մրցույթի տեխնիկական առաջադրանքը,

2) հանձնարարել գնահատող հանձնաժողովին՝ պայմանագիր կնքելու նպատակով բանակցություններ վարել տեղական խորհրդատու Գոհար Թադևոսյանի հետ,


3) հանձնարարել ԾԻԿ-ի գործադիր տնօրեն Ֆ.Փիրումյանին՝ բանակցությունների արդյունքում ձևավորված պայմանագրի նախագիծը համաձայնեցնել ԱԶԲ-ի հետ և մեկ ամիս ժամկետով պայմանագիր կնքել տեղական խորհրդատու Գոհար Թադևոսյանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ,
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ



Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Մ.ԹՈՒՄԱՍՅԱՆ